# ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԹԻՒ Բ. 1868 ՅՈՒՆԻՍ 1

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

յՕրագրութեանց Սինոդի Ս. Էջմիածնի.

Վեհափառ Կաթուղիկոսն ամենայն Հայոց փոյթ ունելով վերանորոգել Հայաստանի հոյակապ ու հռչակաւոր Վանորայքը, որոնք յամենածախ ժամանակէն անշքացած ու անխնամք են 'ի պահպանութենէ, Հայրապետական կոնդակաւ վանահայր կարգեց Սանահնի հռչակաւոր վանքին վարդան եպիսկոպոսն Օհաննեցի, հաստատելով անդ ժառանգաւորաց դպրոց ըստ նախանձելի օրինակի արժան յիշատակ Նախնեաց մերոց.

Ախլցխայու Թեմի ժողովրդոց ևս չկամելով Վեհափառ կաթուղիկոսն Թողուլ առանց հոգևոր հովուութեան, նոյն Թեմի փոխանորդ կարգեց հայրապետական կոնդակաւ բաբամեան Մկրտիչ Եպիսկոպոսն, նոյնպէս Գորւոյ յաջորդութեանը, որ այս միջոցիս առանց հոգևոր հովուի էր, փոխանորդ ուղարկեց Մամբրէ վարդապետն Մանուկեան.

Բեսսարաբիոյ և Նոր Նախիջևանայ վիճակին կարգուեցաւ կառավարիչ Հայրապետական կոնդակաւ Գէորգ Արքեպիսկոպոսն Մկրտչեան. և Թոյլ տրուեցաւ նորան տանել իւր հետ նոյն վիճակի փոխանորդութեանց համար Սարգիս վարդապետն տէր Գասպարեան և Յակոբ վարդապետն տէր Աւետիսեան.